

Կ-776-04.05.2015-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 119-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 119. Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը»,

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 309.1-րդ հոդվածով.

«Հոդված 309.1. Խոշտանգումը

1. Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ

տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն հարկադրելու կամ կատարումից ձեռնպահ մնալու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) առանձին դաժանությամբ,

6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 341-րդ հոդվածի՝

1) վերնագրում «**հետաքննություն կատարող անձի**» բառերը փոխարինել «**հետաքննության մարմնի**» բառով.

2) 1-ին մասում «հետաքննություն կատարող անձի կողմից» բառերը փոխարինել «հետաքննության մարմնի կողմից բռնություն կամ» բառերով, իսկ «վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք» բառերը՝ «դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն» բառերով, ինչպես նաև նույն մասի սանկցիայում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով:.

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Նույն արարքը, որը զուգորդվել է խոշտանգմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) առանձին դաժանությամբ,

6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատագրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների

| Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը |
|--|--|--|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| <p>ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Զհանգիրյան</p> | <p>1.«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդված 2-րդ կետ:</p> <p>2. Նախագիծի 3-րդ</p> | <p>1. Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան խստացնել՝ առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման փոխարեն նախատեսելով առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում:</p> <p>2. Հաշվի առնելով այն, որ</p> | <p>1. Ընդունվել է. ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում «երկու» բառը փոխարինվել է «երեք» բառով: Սանկցիայի խստացումը բխում է ինչպես քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի քրեական քաղաքականությունից, այնպես միջազգային իրավական չափանիշներից:</p> <p>1. Ընդունվել է. ՀՀ քրեական օրենսգրքի</p> |

| | | | |
|--|--------------------------|--|---|
| | <p>հողվածի 3-րդ կետ:</p> | <p>պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների զգալի մասը կատարվում է քրեական վարույթի ընթացքում՝ անհրաժեշտ է խոշտանգման նման դրսևորումները դիտել որպես արդարադատության դեմ ուղղված հանցագործություններ և ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան գլխում ունենալ հատուկ նորմ: Հետևաբար առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն նախատեսել հողվածի 1-ին մասով նախատեսված արարքը խոշտանգմամբ զուգորդված կատարելու համար:</p> <p>Բացի այդ, լուծումն ամբողջականացնելու նպատակով ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Նախագծից հանվել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 2-րդ մասում առկա</p> | <p>341-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«2. Նույն արարքը, որը զուգորդվել է խոշտանգմամբ՝</p> <p>պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:</p> <p>Առաջարկվող մոտեցման ամբողջականությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից կատարվել են հստակեցնող՝ սույն ամփոփաթեթում բերվող փոփոխությունները:</p> |
|--|--------------------------|--|---|

| | | | |
|--------------------------|--|--|--|
| | | <p>«անձանց նկատմամբ» բառերը, որպեսզի 2-րդ մասը կիրառելի դառնա նաև այն արարքների նկատմամբ, որոնց պարագայում քննիչը խոշտանգում է իրականացնում, ասենք, դատավարության մասնակից չհանդիսացող վկայի ծնողի նկատմամբ՝ դրանով հարկադրելով վկային տալ ցուցմունքներ: Այսինքն՝ կատարվի որ հարկադրելը ում նկատմամբ էլ որ իրականացվի, եթե դա խոշտանգմամբ է կատարված հանցակազմի նկարագրված սուբյեկտների կողմից ապա կորակվի 341-րդ հոդվածի 2-րդ հոդվածով:</p> | |
| <p>ՀՀ կառավարություն</p> | <p>1. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետ:</p> | <p>1. Անհրաժեշտ է համարվել Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի վերնագրում կատարել փոփոխություն՝ հետևյալ հիմնավորմամբ: Հետաքննություն</p> | <p>1. Ընդունվել է. ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի վերնագրում «հետաքննություն կատարող անձի» բառերը փոխարինվել են «հետաքննության մարմնի» բառերով:</p> |

| | | | |
|--|--|---|---|
| | | <p>կատարող անձ տերմինը ենթադրում է հարուցված քրեական գործից հետո իրականացվող դատավարական գործունեություն կատարողին, որի մեջ չեն մտնում, օրինակ, հետաքննության մարմնի այն աշխատակցի գործողությունները, որոնք կատարվել են նյութերի նախապատրաստության ընթացքում: Այսինքն՝ նյութերը նախապատրաստվում են հետաքննության մարմնի կողմից, բայց դա հետաքննություն չէ: Առաջարկվող ձևակերպումը կներառի նաև այդ գործունեությունը, քանի որ ոչ թե գործառույթով ենք բնութագրում, այլ սուբյեկտով: Ընդ որում, ՀՀ ՔԴՕ համաձայն՝ հետաքննության մարմինը պետք է և աշխատակիցներն են:</p> <p>2. Անհրաժեշտ է համարվել Նախագծի 3-րդ հոդվածով</p> | <p>2. Ընդունվել է. ՀՀ քրեական օրենսգրքի</p> |
|--|--|---|---|

| | | | |
|--|--|---|--|
| | <p>2. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ:</p> | <p>Նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասում «վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք» բառերը՝ «դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն» բառերով այն հիմնավորմամբ, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ քրեական դատավարության մասնակցող անձինք են ոչ միայն դատավարության մասնակիցները (կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը կամ տուժողը), այլ նաև ընթերական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը և փորձագետը: Ոստի հոդվածի ամբողջական կիրառությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հոդվածում օգտագործել առավել ընդգրկուն և միասնական հասկացություն քրեական</p> | <p>341-րդ հոդվածի 1-ին մասում «վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք» բառերը փոխարինվել են «դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն» բառերով:</p> |
|--|--|---|--|

| | | | |
|--|--|---|--|
| | | <p>դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածին համահունչ:</p> <p>Բացի այդ, ներառվել է նաև բացատրությունը, որը կարող է վերցվել քրեական գործի հարուցման հարցի լուծման նպատակով նյութերի նախապատրաստման ընթացքում:</p> <p>Այս կերպ կապահովվի հանցակազմի ամբողջական կիրառությունը քրեական վարույթի բոլոր փուլերում:</p> | |
|--|--|---|--|